ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/133

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2021թ. թիվ 26/26-1/8201-2021 գրությամբ «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 12.05.2021թ. թիվ Ե-161 գրության հիման վրա, 24.05.2021թ. թիվ 26/26-1/8201-2021 գրությամբ նախաձեռնել է «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/133 ընթացակարգի շրջանակներում 31.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.05.2021թ. թիվ Ե-161 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 01298237/ միջև կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-ՍԸԿՀ» ծածկագրով պայմանագիրը, սննդամթերքի մատակարարման հետ կապված էական խախտումների հետևանքով, միակողմանի լուծվել է՝ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից:

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը /Որոշում միակողմանի լուծելու վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման արձանագրություններ, պայմանագիր/ նշյալ մատակարարին սև ցուցակում ներառելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/133 ընթացակարգի շրջանակներում 31.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ-ՍԸԿՀ» պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը

պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 28700 հատ «Հավի ձու սեղանի 02-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, ձվի պահման ժամկետը 0 ՕՀ-ից մինչև 20 ՕՀ ջերմաստիճանում մինչև 14 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70%» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2021թ.:

3. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ին ուղղված 07.05.2021թ. N 156 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 29.12.2021թ. կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԽՍ-ՍԸԿՀ ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների ողջ ծավալը, համաձայն որի «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմ լուծում է վերը նշված պայմանագիրը»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 07.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2021թ. թիվ 26/26-1/8201-2021 գրությունը, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 12.05.2021թ. թիվ Ե-161 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ-ՍԸԿՀ» պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 28700 հատ «Հավի ձու սեղանի 02-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի

զանգվածի, ձվի պահման ժամկետը 0 ^{0}C-ից մինչև 20 ^{0}C ջերմաստիճանում մինչև 14 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70%» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2021թ.:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ին ուղղված 07.05.2021թ. N 156 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև ***29.12.2021թ. կնքված*** «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման ***ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-ՍԸԿՀ ծածկագրով պայմանագրի*** շրջանակներում «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների ողջ ծավալը, համաձայն որի «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմ լուծում է վերը նշված պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 07.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը***:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 07.05.2021թ. հրապարակված Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ 07.05.2021թ. N 156 ծանուցման համաձայն՝ միակողմանի լուծվել է թիվ ***29.12.2021թ. «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-ՍԸԿՀ»*** պայմանագիրը, մինչդեռ՝ սույն ընթացակարգի նախաձեռնման համար Պատվիրատուի կողմից որպես հիմնավորում ներկայացվել է 29.12.2020թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-ՍԸԿՀ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարումը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ 29.12.2021թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-ՍԸԿՀ» պայմանագրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը

չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2021թ. թիվ 26/26-1/8201-2021 գրությամբ «Ստատուս Ընդ Կո Հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**